Կարօն, որպէս յայտնի է մեր ընթերցողին, իր ընկերների հետ գնաց Բարդուղիմէոս առաքելոյ վանքը, խոստանալով, թէ կը վերադառնայ ոչ աւելի, քան մի օրից յետոյ: Բայց ահա մի շաբաթ անցաւ այն օրից, նրանից ոչինչ լուր չկայ: Ծերունի որսորդը այս մասին խիստ անհանգստութեան մէջ էր, չգիտէր ինչ բան արգելք եղաւ նրանց վերադարձին: Մի գիշեր դեռ նոր էր պատել մութը, յայտնուեցաւ մի գրաբեր, բոլորովին քրդի ձեւով հագնուած, նա տուեց ծերունի որսորդին մի նամակ: Ես այն ժամանակ հասկացայ, թէ նա գիտէր կարդալ: Իմանալով, որ նամակը Կարոյիցն է, նա անհամբեր կերպով սկսեց կարդալ: Ես նստած էի նրա մօտ: Նամակի պարունակութեան մասին նա ինձ ոչինչ չյայտնեց, կարծես բոլորովին մոռացաւ իմ գոյութեան մասին: Միայն վերջացնելով ընթերցումը, նա իսկոյն հրամայեց Մըհէին իր ձին թամքել, եւ ասաց Մարօին շուտով իր զէնքերը բերէ: Այսպիսի երեւոյթները ծերունի որսորդի տնակում սովորական լինելով, Մարօն ամենայն հանդարտութեամբ գնաց հօր զէնքերը բերեց, եւ մինչեւ անգամ չհարցրուց՝ հայր, ո՞ւր ես գնում, երբ նա նստեց ձին եւ բակից դուրս էր գնում: Այդ ժամանակ միայն ծերունին տեսաւ ինձ եւ ասաց.

— Ես կը վերադառնամ մի քանի օրից յետոյ:

Գրաբերը գնաց որսորդի հետ:

Երբ ես մտայ սենեակը, Մարօն սովորական ժպիտը երեսին ինձ ասաց.

— Մենք էլի՛ մնացինք մենակ...

Բայց ես այնքան խռովուած էի ծերունու անակնկալ հեռանալով, որ ոչինչ չպատասխանեցի Մարօի ուրախ ժպիտին: Նա, երեւի, վիրաւորուեցաւ իմ սառնասրտութեամբ, եւ մի գեղեցիկ խոժոռ գործելով իր սիրուն երեսի վրայ, ասաց.

— Դու չա՛ր մարդ ես, Ֆարհատ:

Մարօն էլ չնայեց իմ վրայ, ծիծաղելով սենեակից դուրս վազեց: Ես մնացի միայնակ: Իմ խռովութիւնը հետզհետէ սաստկանում էր: Ծերունի որսորդի վարմունքը չափազանց տանջում էր ինձ, որ նա արժան չհամարեց հաղորդել եւ ոչ մի բառ Կարօյի նամակի պարունակութիւնից, լաւ գիտցած լինելով, որ ամենայն տեղեկութիւն նրա մասին որքան իր համար, նոյնքան եւ իմ համար ուրախալի էր: Ինչո՞ւ նա զրկեց ինձ այդ ուրախութիւնից: Ինչո՞ւ չգիտենալ ինձ, թէ ո՞ւր մնաց այն մարդը, որին ոչ միայն յարգում էի ես, այլեւ սիրում էի: